ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի որակավորման
հանձնաժողովի 02.04.2023թ. N 1/1-Լ որոշման

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 45.11-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

1. 2024 թվականի գարնան որակավորման քննություններին մասնակցելու համար դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերը «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերում նշված անձինք կարող են ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատ **2024թ. ապրիլի 5-ից մինչև 2024թ. ապրիլի 15-ը (ներառյալ)** (ներառյալ) ժամը 10.00-ից մինչև ժամը 18.00-ն (աշխատանքային օրերին): Փաստաթղթերի ցանկը սահմանված է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 13.01.2023թ. թիվ 2/4-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննությունների կազմակերպման, ընդունման, անցկացման և հանձնման կարգի 31-րդ կամ 32-րդ կետում (www.advocates.am, Պալատ -> Որակավորման հանձնաժողով):
2. Որակավորման քննությունների **առաջին փուլն** անցկացվելու է **ք.Երևան, Զաքյան 7-3** հասցեում (ՀՀ փաստաբանական ակադեմիայի լսարաններում), իսկ **երկրորդ փուլը**՝ ՀՀ փաստաբանների պալատում (**ք.Երևան, Զաքյան 7-2** հասցեում):
3. Ներկայացված փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգումը ՀՀ փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմակերպում է փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի հաջորդ օրվանից հաշված **երկու ամսվա** ընթացքում:
4. Որակավորման քննության առաջին փուլն անցկացվելու է **30.05.2024թ. ժամը 09.00-ից:**
5. Առաջին փուլի քննությանը մասնակցելու համար հավակնորդները պետք է ներկայանան և գրանցվեն քննության օրը՝ ժամը **08$^{00}$-ից** մինչև **08$^{45}$**՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:
6. Քաղաքացիաիրավական և վարչական ուղղվածության հավակնորդների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **19.06.2024թ-ին ժամը 09.00-ից:**
7. Քրեաիրավական ուղղվածության հավակնորդների որակավորման քննության երկրորդ փուլն անցկացվելու է **20.06.2024թ-ին ժամը 09.00-ից:**
8. Երկրորդ փուլին մասնակցելու համար հավակնորդը պետք է ներկայանա ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի կողմից էլեկտրոնային փոստով կամ այլ եղանակով ծանուցված օրը և ժամին՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ: Երկրորդ փուլին կարող է մասնակցել առաջին փուլը հաղթահարած հավակնորդը: